

ԲԱՐՁՐ ԱՇԽԱՏԱԿԱՐԶ

ՊԱՅՔԱՐ ԴԱՏԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ

Դատական համակարգը առաջիկայում եւոյն կփոփոխվի, սակայն այստեղ շարունակելու են աշխատել նույն դատավորները:

Այսինքն, ակնհայտ է, որ եթե դատական համակարգում կոռուպցիան նվազեցնելու ուղղությամբ հատուկ միջոցառումներ չիրականացվեն, ապա անեն ինչ կլինի ինչպես մինչ այժմ, երբ դատարանների որոշումների եւ վճիռների անաչառությանը ոչ ոք չի հավատում: Ուստի, ի՞նչ կարելի է անել դատական համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար: «Կոռուպցիոն ռիսկերի տեսանկյունից դատական համակարգը մեր երկրի այն ցավոտ տեղերից մեկն է, որտեղ անելիքները շատ են: Բայց ի՞նչ ենք անում մենք այդ ուղղությամբ՝ ոչինչ: Բոլորը կարող են քննադատել, նույնիսկ քաբկոծել դատավորներին եւ դատական համակարգը, բայց դրանից ոչինչ չի փոխվելու: Կոռուպցիոն ռիսկերը միայն դրանց քննադատությանը չեն նվազի: Անհրաժեշտ է կոնկրետ գործողություններ կատարել»,- ասում է վճռաբեկ դատարանի նախագահ Գովհաննես Մանուկյանը: Վերջինիս կարծիքով, հակակոռուպցիոն միջոցառումները սկսելուց առաջ անհրաժեշտ է նախ դրանց համար հիմք ստեղծել: Իսկ որդես հիմք կարող է լինել դատավորների աշխատավարձերի եական կամ, ավելի ճիշտ, շեշտակի բարձրացումը: Լեռկայումս առաջին ատյանի դատարանի դատավորի դրոյթաշափը 220, վերաքննիչինը՝ 242, իսկ վճռաբեկինը՝ 264 հազար դրամ է: Դատավորները ստանում են նաեւ 50-ից 100 հազար դրամ հավելավճարներ: Բայց արդյո՞ք շատ վարձատրվելու դեմքում դատավորները կիրառարվեն կաշառքներից: Այս հարցին վճ-

ռաբեկ դատարանի նախագահը ղատասխանում է այսպես. «Ինքնին աշխատավարձեր բարձրացումը չի նվազեցնի կոռուպցիոն ռիսկերը, որովհետեւ աշխատավարձերի եական բարձրացումը կարող է նաեւ դառնալ այսօրվա կոռուպցիոն դատավորի եկամուտներին ավելացող հավելավճար: Բայց աշխատավարձի կտրուկ բարձրացումը արդյունավետ կդարձնի աղաքա հակակոռուպցիոն շատ խիստ եւ կտրուկ միջոցառումները: Դատավորին անհրաժեշտ է ղեկավարել կողմից տալ այնպիսի ղատակարելի գումար, որդեսգի նա դառնա հակասոցիալական եակ: Այսօր դատավորի համար կարող է ավելի դժվար լինել ինչոր ճնշումներին ներազդելը, քան թե այդ ճնշմանը համաձայնելը: Դատավորը, հրաժարվելով անել այն, ինչ իրենից խնդրել կամ ղատակարելի են ինչոր մարդիկ, կարծես մարտահրավեր է ներտում ողջ հասարակությանն իր ղնկերներին, իր հարգատներին, մերձավորներին, ազգականներին: Իր կոլեգաներին, որոնք հագար ու մի հարցով կարող են միջնորդել: Եւ մարտահրավեր է նետում դատախազությանը եւ իր այսպես ասած, ղեկավարությանը: Այսօր հասարակությունը սովոր է աղբը որոշակի «կանոններով»՝ Այդ «կանոնները» մի փոքր քննադատելով մի քիչ հաստատվելով՝ բոլորս համակերպվել աշխատում ենք դրանցով: Բոլորս ինչոր խնդիրներ ենք ունենում եւ փորձում ենք այդ սահմանված «կանոնների» մեջ լուծումներ գտնել: Բայց երբ մենք այսօր դատավորին ասում ենք՝ դա: անաչառ եղիր եւ ոչ մեկի մի լսիր, մենք նույն է թե ասում ենք՝ դատավոր, վերցրու ղենքդ եւ ղմա հասարակության ղեմ կովելու: Որդեսգի մենք բարոյական իրավունք ունենանք դատավորին ասել ղմա հասարակության

ղեմ կով տուր եւ դարձիր բոլորի աչքի շողը, դրա համար ղոնե այդ մարդկանց համար որոշակի երաշխիքներ ղիտի ստեղծենք, որդեսգի չվախենան փողոցում հայտնվել, որտեղ բոլորն իրենցից կշրջվեն: Արդյո՞ք դատավորները կարող են անաչառ լինել չեն կարող, որովհետեւ հարյուրավոր սոցիալական լծակներ կան, որոնցով կարող են նրանց վրա ներազդել, ի վերջո, նրանք մարդ են»:

Վերը բերված ղարգաբանումներից հետո Գովհաննես Մանուկյանը փորձեց ներկայացնել այն հնարավոր հակակոռուպցիոն միջոցառումները, որոնք կարելի է կատարել դատական համակարգում՝ դատավորների աշխատավարձերը բարձրացնելուց հետո: Վճռաբեկ դատարանի նախագահը որդես հակակոռուպցիոն միջոցառման տարբերակ տեսնում է, ասենք, օրենքով դատավորների նկատմամբ ղատակարելի խստացնելը: «Ասենք, դատավորի կողմից կաշառք վերցնելու համար օրենքով կարող է առավելագույն ղատիժ սահմանվել»,- ասում է նա: Դատավորների կողմից հնարավոր կոռուպցիոն երելույթների նկատմամբ ղատասխանատվության շարքում վճռաբեկ դատարանի նախագահն առաջարկում է նաեւ օրենսդրությանը դատավորների համար ղարտականություն սահմանել այն, որ նրանք ղարտավորված լինեն հայտնել բոլոր միջամտությունների մասին, որոնք իրենց նկատմամբ կատարվում են: Իսկ եթե դատավորը միջամտության մասին չի հայտնում, եւ այդ մասին հետագայում հայտնի էղանում, ապա նա է ղատասխանատվության է ենթարկվում, ասենք միանգամից աշխատանքից հեռացվում է: «Օրենքով գրում ենք, որ դատավորը ղարտավոր է տեղեկացնել իր նկատ-



մամբ իրականացված ցանկացած միջամտության մասին, ակնկախ նրանից, թե դա ինչ ղաշտոնյաի կողմից է եղել,- ասում է Գովհաննես Մանուկյանը եւ շարունակում թվարկել այս ուղղությամբ հնարավոր փոփոխությունները,- անհրաժեշտ է նաեւ եւոյն խստացնել ղատասխանատվությունն , այն ղաշտոնյաների նկատմամբ, ովքեր կփորձեն միջամտել դատական գործընթացին, հարկավոր է դատական համակարգը եւոյն թափանցիկ դարձնել»,- ասում է վճռաբեկ դատարանի նախագահը: Որդես դատական համակարգի թափանցիկացման տարբերակ կարող է լինել, ասենք, դատական ակտերը բոլորի համար բաց փաստաթուղթ դարձնելը: Դրանք կարող են դրվել ինտերնետային ինչոր կայքում, որի միջոցով ցանկացողները հնարավորություն կունենան դրանց հետ ծանոթանալ: Կարող է կիրառվել նաեւ տարբերակ, ղստ որի, ցանկացած որ իրավունք ունի ղմալ դատարան եւ իրեն անհրաժեշտ գործի հետ ծանոթանալ: Սի խոսքով, դատական համակարգում հնարավոր հակակոռուպցիոն միջոցառումները բազմաթիվ են, ղարգաթես անհրաժեշտ է դրանք սկսել կյանքի կոչել:

ՎԱՅԻՂՆ ԳՈՎԿԱՅԱՆ